



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Հարություն Պետրոսյանին
հասցե՝ Լոռու մարզ, գ.Շնող
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ պետ
պարոն Ա.Սարգսյանին

Կից ուղարկվում է Ձեր գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 06.03.2012թ. թիվ 8/1 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/1

6 մարտի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.02.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Հարություն Պետրոսյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ 20.01.2012թ. թիվ 2104954 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 21.02.2012թ. թիվ 7 որոշման, ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ 20.01.2012թ. թիվ 2104954 ստուգման ակտի դեմ բերված գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Նշվեց նաև, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ պետի 21.12.2011թ-ի թիվ 2204428 հանձնարարագրի, Ա/Ձ Հարություն Պետրոսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 27.12.2011թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2204428 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է հետևյալը:

Սույն թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 10:45-ին Շնող գյուղում գործող Ա/Ձ Հարություն Պետրոսյանին պատկանող փայտամշակման արտադրամասից Ֆիզ. անձ Նիկոլայ Գրիգորյանի կողմից կանխիկ կատարվեց հսկիչ գնում՝ 2000 դրամի չափով, հինգ հատ փայտյա դռան դետալներ: Ա/Ձ Հարություն Պետրոսյանի արտադրամասից նշված ապրանքի վաճառքն իրականացրեց վերջինիս մայրը՝ Անուշ Ղորխմազյանը, որը գումարը վերցնելուց հետո չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կարոն չտրամադրեց: Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ժամը 11:02-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ Օ դրամ ընդհանուր գումարով, որում ներառված էր հսկիչ գնման գումարը: Այնուհետ գնման արժեքը՝ 2000 դրամը, մուտքագրվեց ՀԴՄ և դուրս բերվեց կտրոն: Ժամը 11:04-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 2000 դրամ ընդհանուր գումարով: Պարզվեց նաև, որ ՀԴՄ-ում ֆիքսված ժամը փաստացի ժամից առաջ է 38 րոպեով:

Փաստորեն հարկ վճարողի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հսկիչ գնման ընթացքում պարզվեց նաև, որ Ա/Ձ Հարություն Պետրոսյանի մայրը՝ Անուշ Ղորխմազյանը, որը հրաժարվեց ստորագրել մեր կողմից գրված արձանագրությունը, որպես վարձու աշխատող գրանցված էր և չունեի օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագիր:

Հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված տվյալները հիմք են հանդիսացել Թումանյանի ՏՀՏ պետի 27.12.2011թ-ի թիվ 2204954 հանձնարարագրի հրապարակման համար: Արդյունքում կազմվել է 20.01.2012թ. թիվ 2104954 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

Հիմք ընդունելով Ա/Ձ Հարություն Պետրոսյանի մոտ ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ պետի 21.12.2011թ. թիվ 2204428 հանձնարարագրով 27.12.2011թ. ֆիզ. անձ Նիկոլայ Գրիգորյանի կողմից կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում 27.12.2011թ. կազմված թիվ 2204428 արձանագրությունը, որով արձանագրվել է հարկ վճարողի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը և ղեկավարվելով ՀՀ-ում

ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, Ա/Ձ Հարություն Պետրոսյանին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ա/Ձ Հարություն Պետրոսյանի գանգատում մասնավորապես նշված է.

27.12.2011թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ աշխատակիցների կողմից իմ արտադրամասում կատարվել է ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է թիվ 2104954 ստուգման ակտը և ինձ առաջադրվել բյուջե վճարման 150 000 դրամ:

Կազմված ակտի վերաբերյալ ունեմ առարկություն հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտը գրվել է իմ բացակայությամբ և այդ օրը ես ընդհանրապես բացակայել եմ գյուղից: Ոմն անձ՝ Նիկոլայ Գրիգորյանը, մոտեցել է մեր սեփական տանը: Այդ պահին տանը գտնվել է միայն իմ մայրը՝ Անուշ Ղորխմազյանը, որն իմ ձեռնարկատիրական գործունեության հետ որևէ կապ չունի: Այդ անձը դիմել է մորս, թե իբրև ես խնդրել եմ իրեն փոխանցել 2000 դրամը և տալ մի քանի հատ փայտյա դետալներ: Հայտնում եմ, որ Նիկոլայ Գրիգորյանին չեմ ճանաչում և նրա հետ որևէ պայմանավորվածություն չեմ ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Հարություն Պետրոսյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձինք նախ նշեցին, որ 2009թ-ից մինչև հսկիչ գնումն ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Հարություն Պետրոսյանի շրջանառությունը, ըստ ՀԴՄ-ի տվյալների, կազմել է 0 դրամ: Նշված հանգամանքը, ինչպես նաև հարկային տեսուչների դիտարկումները և ուսումնասիրությունները հիմք են հանդիսացել Ա/Ձ Հարություն Պետրոսյանի մոտ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) կատարելու համար: Մասնավորապես, հարկային տեսուչների կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ պետին ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ հսկիչ գնում իրականանացնելու վերաբերյալ, քանի որ Ա/Ձ Հարություն Պետրոսյանի իրացման շրջանառության տվյալները հավաստի չեն: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ պետի կողմից 21.12.2011թ-ին հրապարակվել է թիվ 2204428 հանձնարարագիրը, որի համաձայն դրանում ընդգրկված հարկային ծառայողներին, ինչպես նաև ֆիզիկական անձ Նիկոլայ Գրիգորյանին հանձնարարվել է Ա/Ձ Հարություն Պետրոսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Ընդ որում, ֆիզիկական անձ Նիկոլայ Գրիգորյանը, համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4 կետի, տվել է գրավոր համաձայնություն հսկիչ գնում կատարելու համար:

2011 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 10:45-ին Շնող գյուղում գործող Ա/Ձ Հարություն Պետրոսյանին պատկանող փայտամշակման արտադրամասից Ֆիզ. անձ Նիկոլայ Գրիգորյանի կողմից (համաձայն նախնական պայմանավորվածության) կանխիկ կատարվել է 2000 դրամի հսկիչ գնում՝ հինգ հատ փայտյա դրան դետալներ: Ա/Ձ Հարություն Պետրոսյանի արտադրամասից նշված ապրանքի վաճառքն իրականացրել է վերջինիս մայրը, որը գումարը վերցնելուց հետո այն չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կարոն չի տրամադրել: Կատարված հսկիչ գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը հիմնավորվել է կատարված համապատասխան գործողություններով: Մասնավորապես, ժամը 11:02-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը՝ 0 դրամ ընդհանուր գումարով, այնուհետ գնման արժեքը՝ 2000 դրամը, մուտքագրվեց ՀԴՄ և դուրս բերվեց կտրոն և նորից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը:

Հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված տվյալները հիմք են հանդիսացել Թումանյանի ՏՀՏ պետի կողմից 27.12.2011թ-ի թիվ 2204954 հանձնարարագրի հրապարակման և ստուգման արդյունքներով կազմված ստուգման ակտով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Հարություն Պետրոսյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Ա/Ձ Հարություն Պետրոսյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ 20.01.2012թ. թիվ 2104954 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ